

իր ծախքով տպագրած է «Նրեւանցի Աղալարի որդի պարոն Գաբրիէլ:»

Սարգիս ունեցած դրամը տպագրութեանց ծախսելէն ետեւ ստիպուեցաւ դադրեցընել: Տպագրեալ օրինակներու մեծ մասն Արեւելք ղրկեց, ուր հետզհետէ կը ծախուէին թէպէտ, բայց կարելի չէր այնչափ դրամ գանձել՝ որ կարող ըլլար գործը շարունակել. մանաւանդ որ դրամին մէկ մասն ալ անհաւատարիմ գործակալներ կերան: Եւ այսպէս դրամական նեղութեան մէջ իյնալով եւ տեղէ մ'օգնութիւն չգտնելով՝ որոշեց դադրեցընել գործը եւ Պոլիս դառնալ: Այս վերագարձին պատմութիւնը չչարունակած՝ աւարտենք այստեղ իր տպարանին պատմութիւնը:

Սարգիս 1752ին վերջը տպագրութիւնը դադրեցընելէն ետեւ՝ տպագրութեանց մէկ փոքրիկ մասը Վենետիկ՝ Յովհաննէս Սեղոսեան Շէլէպուոյն քով թողած էր, որոնց ցանկը գրած է իրեն 24 Յուլիս 1773ին Վենետիկէն «Պետրոս Աբեղա Վ.» (Գիւ. Լիվ.), երբ Սարգիս երկրորդ անգամ Իտալիա գալուն Լիվոնոյ կը գտնուէր: Այս ցանկէն կ'իմանանք որ Սարգիս տպագրեր է նաեւ Ս. Աստուածածնի եւ Ս. Գր. Լուսաւորչի մեծադիր պատկերներ, ինչպէս նաեւ Ս. Աստուածածնի, Ս. Գր. Նարեկացւոյ, եւ Ս. Յակոբ Մծբնայ Հայրապետի պատկերները: 1754—5ին Կ.Պոլիս հաստատուելէն ետեւ՝ էր ի Պոլիս առ կեսարացի Սարգիս Վ.ն գիր տպագրական փորագրեցեալ ի Վենետիկ, յոյժ